նստի: Կարգ եւ սահմանք, ոչ զարդարանք
չունին յեկեղեցիս, զինչ գրեցիս. այլ Հրէից
աղանդովքն վարին, զի թլփատեն զտղայս ըստ
Հրէից. եւ երբ լինի Ժ. ԺԲ. ամաց՝ մկրտեն
40 ըստ Արիանոսաց: Եւ յորժամ պատարագ առ-
նեն կամ այլ կարգ, քօղ արկանեն զերեսօք եւ
զգլխովք. եւ հոռմի խօսիւք եղանակեն «քի-
րէլէզիոն» եւ այլն. եւ փոխանակ ծընծղայի
չալբարայ քչտեն: Այլ եւ կանայք նոցա երգ
45 իմն յօրինեն՝ չրթունս մատամբ հարկանելով
եւ ձայն հնչելով. զայս ոչ միայն յեկեղեցիս,
այլ եւ ի հարսանիս եւ ամենայն հանդէսս:
Իրիցնին ունին կանայս. սեւ չուլ հարեղանին
հագնին. միս բնաւ չունին. եւ ի պահոց ա-
50 ւուրս ձիթով չուտեն, ոչ գինի ըմպեն. աշ-
խարհ(ակա՞ն)ք եւս որպէս Հայք: Կարգաւորքն
զնեն ի գլուխ սեւ մեծ խալուխնի կամ պուլիթ,
բոլոր գէչա, որպէս ի Լէհ՝ Հրեայք, նոյնպէս եւ
աշխարհականք. բայց աղօթից եւ այլ առաքի-
55 նութեանց եւ բարի գործոցն սակաւ հոգան.
միայն պահոց եւ անսուաղութեան հետեւին:
Իսկ իմաստութիւն եւ հանճար ոչ երբեք տեսի
առ նոսա: Նշխարք ըստ Հոռմոց հաց տան[4].
եւ զայն՝ ամենայն ոք եփէ եւ ծախէ: Եւ նոքա
60 թլփատեն ոչ միայն զարուս, այլ եւ զէգս. եւ
թէ զպատճառն այսմ կամիս իմանալ, ընթեր-
ցիր զպատմագիրս. զոր ոչ է պարտ երկրորդել:

Իսկ աղքատք եւ չքաւորքն ի նոցանէ յոյժ

45 օրինեն: — 48 աղանդովքն: — 53 հրէայք: — 57 երբէք:

[4] Այս ինքն՝ տան մէջ գործածուած հացը: